Պարույր Սևակ

Եև կատու

Իմ սևության համար դու արևի՛ն դիմիր,
Պայծառության համար՝ ի՛նձ միմիայն,
Իսկ ես պիտի դիմեմ այն հորթ-արջառներին,
Որ չեն դարձել դեռ եզ,
Սակայն պիտի՛ դառնան:
Եվ ասածիս վրա շատ էլ մի՛ միտք արա:
Միտք անելու համար ճակատ չեն համբուրում:
Ճակատն առհասարակ հո համբույրի տեղ չէ.
Մի փորձադաշտ է նա, ուր ցանում են կնճիռ:
Ու երբ միտք եմ անում, որ բյուր դարեր առաջ
Ես քայլեր եմ փոխել շա՜տ ավելի հարմար՝
Չորս թաթերի՛ս վրա,
Պոչի՜ս ուղեկցությամբ,
Ու չեմ փնտրել բառե՜ր-
այդ պահերին
Ինձ ողբում եմ՝ օտար մեռելի պես,
Հետո էլեկտրական ածելիով
Սափրվում եմ մաքուր ու դուրս գալիս,
Որ հմայքը չափեմ օտար կանանց,
Խոտի աճման համար հարկ վճարեմ աչքով,
Փողոցները կտրեմ՝ առանց «անցումներ»-ի,

Ինքնագլուխ - ազատ սև կատվի՛ պես:
Խեղճ սև կատուները ունեն շա՜տ վատ համբավ.
Մարդ ու մեքենավար նրանց հայհոյում են:
Շատ կուզեի գոնե չհավատալ,
Թե իմ կատվանման անցումներից
Պատահել է գեթ մի ավտովթար...

30.IX.1961թ.
Երևան